ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2024թ. թիվ 1010-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ
ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, համաձայն ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի և ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) Լոռու մարզային վարչության հետ համատեղ կազմված աշխատանքային ծրագրի, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 04.12.2024թ. թիվ ԴԽ/15.2/39333-2024 հանձնարարականը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2025թ. հունվարի 1-17-ը անցկացնել անասնագլխաքանակի համատարած հաշվառում:

2. Հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետում և պատշաճ մակարդակով իրականացնելու համար առաջարկել Լոռու մարզի բոլոր համայնքների ղեկավարներին՝

1) Մինչև ս/թ դեկտեմբերի 27-ը կազմել և հաստատել 2025թ. հունվարի 1-ի դրությամբ առկա գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողովների կազմերը՝ դրանց կազմում ընդգրկելով նաև տվյալ համայնքը սպասարկող անասնաբույժին:

2) Անասնագլխաքանակի հաշվառման արդյունքները մինչև 2025թ. հունվարի 20-ը ներկայացնել Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն և ՀՀ վիճակագրական կոմիտեի Լոռու մարզային վարչություն:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանի վրա:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

X

2024-12-05 18:37:37 GMT+4
Հավաստված է ԷԿԵՄԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Signed by: GHAZARYAN ARAM 2003720081 Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 5
ք.Վանաձոր